

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԱՅԻՍՅԱՆ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ

ՈԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պատրիական գիւղությունների ղոկալուր

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ - ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀՐԱՇՈՒՆՉ ՈԳԻՆ

«1918 թ. մայիսի վերջներին վարել եմ Ղարաքիլիսէի ճակատամարտը: Վիրաւորւել եմ, մերկայացուել ամենաբարձր քաջութեան շքանշանի: Պիտի խոստովամել, որ առանց Ղարաքիլիսէի ճակատամարտի ոչ թէ օրուայ Խ. Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենա: Ղարաքիլիսէի եռորեայ հերոսականը փրկեց զյսվին ոչ նշացումից Արարատեան հայութիւնը եւ հիմք դրեց Հայկական պետութեան»:

Ինքնակենսազրութիւնից

Ղարաքիլիսայի ճակատամարտի առանցքալին նշանակութեան մասին Նժդեհի արտայայտած այս միտքը ժամանակի բազմաթիւ աղբիրներով վկայուած իրողութիւն է:

Սուանց վարանելու կարելի է պնդել, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի վճռորոշ դերի ու նշանակութեան բացայալուումը հայ պատմագիտութեան չուստանափրուած խնդիրներից է: Ցատկապէս չի շեշտում այն բազմից վկայուած իրողութիւնը, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի ոգեշնչողն ու կազմակերպիչը Գարեգին Նժդեհն էր, ինչպէս Սարդարապատինը՝ Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հայաստանեաց Եկեղեցին: Դրա հիմնական պատճառն այն է, որ Ամի՞ն ճակատի հրամանատարը Բէյ-Մամիկոնեանն էր, իսկ հրամանատարների մէջ էին բազմաթիւ նշանաւոր բարձրաստիճան սպաներ՝ Ղորդանեանից սկսած, Սամարցեանից ու Ղամազեանով (Ղամազեան: Ռ. Հ.), վերջացրած, իսկ Նժդեհն այդ ժամանակ պորուչիկի աստիճան ունեն: Եւ երկրորդ՝ հարցը չի ուսումնափրուած այդ տեսանկիւնից, քանի որ Գարեգին Նժդեհի անունը 1921-1990 թթ. փակի տակ էր Խորհրդային Հայաստանում:

Ժամանակակիցների յուշերից և աշխատութիւններից բերուած վկայութիւններով անդրադանաբք խուճապահար փախչող բազմութիւններին ու հայ օօրքին ոգեշնչելու եւ դէսի ճակատ մէկնելու մէջ Գարեգին Նժդեհի վճռական դերակատարութեանը: Ընդ որում այդ դերակատարութիւնը հաստատող աղբիրների մեծ մասը Ղարաքիլիսայի ճակատամարտին նույրուած զիտական աշխատութիւններում շրջանառութեան մէջ չի դըրուած:

Ինչպէս հիմնաւորում է պատմաբան Ա. Յարութիւնեանը, «Այսպիսով, Ղարաքիլիսայի ազգական ուղղութիւնը զլաւարոն էր, որովհետեւ թուրքերը շտապում էին Ղազախ-Աղստաֆա-Ելիզաւետպոլ գծով հասնել Բաքու... Որ թուրքական արշաւանքի ամենաառաջնա-

կարգ նպատակներից մեկը բաքով գրաւում էր, կասկածից վեր է¹: Նոյն կարծիքին նաև նաև խնդրով գրաղուած գրեթե բոլոր պատմաբանները:

Անեսիս Անարունեանը գրում է. «Հայկական ամբողջ պատմաբարտի և մասմատրապէս Ղարաքիլիսայի բախտորոշ ու արիւնայել ճակատամարտի ողին ու մեծութիւնը ըստ արժանույն գնահատելու և ըստունի համար հարկ է գրեթե կրօնական երկիրածութեամբ Խոտեմալ փաստերին: Խոճմոտորէն և առանց կանխակալ, ամբոխամիտ կարծիքներ մկանի առնելու, Կշողատել ստեղծուած տարապայման կացութիւնն ու անսահման դժուարութիւնները քաղաքական, հիւթական, բարդական, դրոնք ամէն մի ուազմական բախտ դարձնում էին հերոսութիւն՝ հայ բանակի, և մարտիրոսութիւն՝ հայ ժողովրդի համար»:

Այդ տեսակէտից Ղարաքիլիսայի պատմական կոիր հայ-թրքական պատերազմի ամենն ընորոշն է թէ՝ իր ծաւալով ու տեսողութեամբ և թէ՝ մանաւանդ այն առանձնայատուկ, դժխտմ գուգադիպութեամբ բարոյալքի ու աւերիչ պայմանների, որոնք միշտ այնպէս ծանրացան հայ մատադ ու անձնուրաց բանակի ուսերին (Հնդգծինն իմն է: Ռ. Հ.): Հայ ցեղի լինել-չլինելու խնդիրն էր վճռում Ղարաքիլիսայի առջև»²:

Ղարաքիլիսայի ճակատամարտի դեր վճռորոշ է համարել նաև Յովի. Քաջազնունին իր համրայաց գրքում եւ որիշ ժամանակակիցներ, որոնք իրենց վկայակոչումներում Ղարաքիլիսան միշտ դնում են Սարդարապատից առաջ եւ լիշտակում միասին³: Կովկասուու թուրքական զօրքերի հրամանատար Վենիբր փաշան, որը թուրքական բանակը դեկավարել է նաև Ղարաքիլիսայում, Սարդարապատում ու Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայի մասին գրում է. «Բացադիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմութեան մէջ: Ղարաքիլիսայի մօս հայերը ցոյց տուեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լաւագոյն զիմուրները»⁴:

Ղարաքիլիսայի վճռական Աշանակութիւնը ընդգծում է նաև այն հանգամանքով, որ Երեսամից 20 կմ վրայ գտնուող թուրքերը մայիսի 22-ին Եղեգնուուի (այն ժամանակ՝ Ղամշլու) կրելով շախօշախիչ պարտութիւն, խուճապահար նահանջեցին: Բայց օգտուելով այն հանգամանքից, որ «Բայկական զօրքերը Սարդարապատը գրաւելուց յետոյ թուլացրել էին իրենց հետապնդումը, ուշքի եկան եւ պաշտպանութեան անցան Արաքս կայարանի եւ Արա հիւսիս-արեւելեան բարձունքների բնագծում: Պաշտպանութեան համար տեղանքը, անշուշտ, ճապատաւոր էին: Սիլիկեանը մի քանի անգամ փորձեց ճակատային գրոխով

¹ Ա. Յարութիւնեան, Թուրքական ինտերվէնցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կոիր-ները, էջ 174-157:

² Ա. Անարունեան, Աւարայի ոգեկոչումը, «Հայրեմիք» ամսագիր, 1931 թ. դեկտեմբեր, թիւ 2, էջ 78; Աւարայի ոգեկոչումը, «Հայրեմիք» ամսագիր, 1932 թ., փետրուար, թիւ (112), էջ 95:

³ Յովի. Քաջազնունի, Դաշնակցութիւնը ամելիք չումի այլնա, Վիեննա, 1923 թ., տե՛ս շարադրանի 17-րդ կէտը: Սուրբ Մելիքնան, Մի՞ դրուաց Ղարաքիլիսէի ճակատամարտից, «Հայրեմիք» ամսագիր, 1920 թ., Պուրթն, բացահիկ, էջ 26; Զօրավար Գ. Ղորդանեան, Հայերու մասնացութիւնը համաշխարհային պատերազմին կովկասեան ուազմանակատին վրա, «Հայրեմիք» ամսագիր, 1928 թ. յունուար, թիւ 3, էջ 144; նարու, թիւ 5, էջ 126; Սարո, Մեծ Հեռուստամարտը, «Աշխատաւոր» թերթ, Հ.Յ.Դ. Վրաստամի կերպունական կոմիտէի պաշտոնական 1919 թ. մայիսի 28, չորեքշաբթի, թիւ 105, էջ 2-3 և այլն:

⁴ Տրուռա և գույն առաջին աշխատանքը, Սովորություններ, 1966 թ., էջ 188:

դուրս մղել թշնամուն, սակայն ապարդիմ» (*Ա. Յարութինեան, նշ. աշխ., էջ 178:*)

Հայկական գօրքը վճռական ու յաղթական յարձակումը վերսկսեց Ապարանում՝ մայիսի 25-ին, Սարդարապատում՝ միայն մայիսի 26-ի լուսաբացին, եւ դա շնորհի Ղարաքիլիսայի ճակատամարտի: Քանի որ եթէ թուրքերը 1918 թ. մայիսի 24-27-ին Ղարաքիլիսայում դիմադրութեան չը հանդիպէին, ապա Սարդարապատի, նաեւ Ապարանի մայիսի 25-27-ի վերջնական յաղթանակմերը չէին լինի, քանի որ Դիլիջանից ու Ապարանից թուրքերի անկասելի մուտքը Երևան եւ Ս. Էջմիածնի կրառնար ամփուսակիելի:

Ղարաքիլիսայի մեր գօրքի քառօրեայ հերոսականը ունեցաւ նաեւ միջազգային ճշանակութիւն: Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ճակատամարտերը թուրքական Աերխուժումից փրկեցին ոչ միայն Վրաստանը իր մայրաքաղաքով, այլ յատկապէս Բաքուն, որը վերցնելու եւ Բաքուի նախթին տիրանալով Կովկասը նուաճելու սեւուն Ապարանով էր թուրքական գօրքը շարժում այդ քաղաքի վրայ: Աւ. Անարոնեանը այս առիթով գրում է: «Հայ ժողովուրդը չափազանց շատ զոմեր յանձն առաւ դաշնակից պետութիւնների կողքին, բայց այն, ինչ նա կատարեց Բաքուի ճամբին եւ Բագուի շուրջն իր գործնական արժեքով, գերազանցում էր բոլոր նորաստեղծ պետութիւնների արածները՝ յօգուտ համաձայնական (դաշնակից - Ռ. Հ.) պետութիւնների: Ընորհին հայ գօրքերի հերոսական դիմադրութեան, կենտրոնական պետութիւններն ու Թուրքիան Բաքուի քարիտին տիրացան առնուազն կէս տարի աւելի ուշ, եւ սրա հետևանքն արագին եղաւ իրենց պարտութեան պատճառների մէջ: Անա թէ ինչ է գրում Գերման սպայակոյտի պետ գօրավար Էր. Լիւտենդորֆ: «Բազուի քարիտը կարող էր մեզ օգնել պայմանով, որ մեր ձեռքն անցներ այն: Գերմանիայում խիստ պակաս էր կարբուրան (carburant) եւ մենք չափազանց մեղն էինք ձմրան լուսատրութեան համար... Մեր 7-րդ բանակի յարձակողականից յետոյ կարրուրանի մեր պաշարը վերջացել էր... Ուկրաինի երկաւուղին նոյնական քարիտի պէտք ուներ: Առնարինն էր կատարուած Ռումինիայից քարիտը համելու համար եւ սակայն յոյս չկար մեր կարիքը լրացնելու: Այժմ այս հնարաւոր էր համարում, եթէ մենք այն բերէինք Անդրկովկասից, մանաւանդ Բաքուից, եւ եթէ կազմակերպուեր փոխադրութեան գործը... Եւ վճռական հարց էր, սակայն, թէ ինչպէս հասնել Բաքու... (Լիւտենդորֆ, Ցիշողովիմներ, էջ 287-297⁵):

Սակայն ճակատամարտի նախօրէին հրավիճակը ողբերգականօրէն անյուսալի էր եւ բոլոր ժամանակակիցների կարծիքով՝ *յատկապէս Ղարաքիլիսայում թուրքերի դէմ կոռուլլը բացառում էին բոլորը: Այսպէս, եթր թուրքերը 1918 թ. փետրուարի 13-ին գրաւեցին Երզնկան, 27-ին՝ Էրզրումը, ապրիլի 10-ին՝ Սարդարամիշը, ապրիլի 25-ին՝ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը, Արևմտաթալիսաստանից, Երզնկայից, Էրզրումից, Կարսից ու Ալեքսանդրապոլից խուճապահր դէպի Ղարաքիլիսա-Դիլիջան փախչող բազմութեան քանակը կէս միջին էր, ամենուր տիրում էր համատարած խուճապ եւ լուսալքում, ոչ մէկը չէր հաւատում թէ հնարաւոր է կոռուլ ու փրկուել: Տասնեակ վկայութիւններից բերենք մի քանիսը:*

«Սուսկալի էր վիճակը Ղարաքիլիսայում,- գրում է դէպերին ականատես հրազեկը

⁵ Աւետիս Անարոնեան, Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք» ամսագիր, 1932 թ., յունուար, թիւ 3 (111), էջ 96:

(Թակոր Տէղ-Թակորնեամ: Ռ. Հ.), - շիոթ եւ յուսահատութիւն: Ամենքը իրենց զլոխները կորցուած՝ անլուսորէն վաղուայ ապագային էին նայում: Անգամ օգոքը խումապի մատնըուած, դարձել էր մէկ խոտժան, ոչ կարգ ու կանոն էր ճանաչում, ոչ էլ մեծ ու փոքր: Վրաստանը դարձել էր իսկական Անտոնեաց երկիր ամենքի համար եւ ամեն ոք մի գերազոյն մոտահոգութիւն միայն ուներ - իրեն մի կերպ Վրաստան զցել»: Խակ Լեռն, որը Բարումում Հայոց Ազգային խորհրդի եւ թուրք կառավարութեան միջնորդ ընթացող հայ-թուրքական հաշոտութեան խորհրդաժողովի խորհրդականն էր եւ քաջատեղեակ էր իրադարձութիւններին, գրում է. «Ժողովուրդը խեղակորոյս փախչում էր դէպի Ղարաբիլսա, լցնում նրա ձոր իր անատուններով, սալլերով: Փախչում է հայկական զօրքը: Գեներալ Նազարեկովը, դրանց հրամանատարը, նախանձեղով Դիլիջան, յուսահատական հեռազիրներ էր ուղարկում Ազգային խորհրդին, զանգահարում էր. թէ իր մօս մնացել են միայն երեք հարիդր հոգի եւ իրեն մնում է գերի ընկեր թուրքերի ձեռքը»⁶:

«Փամբակի 1,2 հարիդր քառ. Վերստ տարածութիւն բռնող ձորը, - գրում է Ղարաբիլիսայի ճակատամարտի մասին անդրամիկ աշխատութեան հեղինակ, դէպերին ականատես Մուշել Ղազարեանը, - մայիսի 19-20-ը փոխել էր գաղթականական ալէկլոծ ծովի, որի յորդանքների մէջ մարդ արարածը դառել էր մի աննշմարելի շիտ: Փախտական կարաւանի համգրուանը սկսում էր Համամլուից (այժմ՝ Սպիտակ-Ռ. Հ.), մինչեւ Համզաշխման (այժմ՝ Մարզպանովիտ - Ռ. Հ.) բարձունքը - շուրջ 30 վերստ տարածութիւն: Հակայ զանգուածի խոտութեան մասին զաղափար կազմելու համար բաւական է յիշել, որ այնուեղ էին կոտսակուած Երեւանի եւ Ղարսի Զահանգմերի ազգարնակութեան 90 տոկոսը - կէս միլիոնից աւելի ժողովորդ, և Երզնկայից, Էրզրումից ու Մուշի դաշտից ճողովրած տաճկահայ հոնդ բազմութիւնը: Տեղական բնակչութիւնը կորել էր գաղթականական հոսանքի մէջ... Մայիսի 19-ին... Համամլու գիտն առանց դիմադրութեան անձնատուր եղաւ: Այս լողոք կայծակի արագութեամբ անցաւ փախստական կարաւանի մի ծայրից մինչեւ միաւր... խումանը ու լրումը աւելի սաստկացաւ: Գաղթականութիւնը, խեղակորոյս սոսկումով՝ իր կեանքն ազատելու համար՝ իր հետ բերած հարստութիւնը... ստիպուած եղաւ թողմել վերջին իշեւանում կամ դէն շպրտել ճանապարհի այս ու այն կորմը... Համամլուից մինչեւ Ղարաբիլսա, Ղարաբիլսայից մինչեւ Համզաշխման - թէ՝ ճանապարհի ուղղութեամբ և թէ՝ ընդարձակ տարածութեան վրայ թափթփուած էին ամէն ինչ... Ղարաբիլսան ընկաւ ան ու սարսափի կօշմարի տակ: Փոկութեան յուսի վերջին կայծերը կամաց-կամաց հանգան ու կորան. մահուան օրինաը տիրեց ամենքին. խորհրդաւոր լուութիւնը կապարի պէս ճնշեց մասապին, որ դառել էր մի հսկայ կենդանի դիակ, իսկ Փամբակի գեղեցկանիստ ձորը - մի ամուսի գերեզման... »⁷:

⁶ Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպեր, 1917-1922, Պէյութ, 1956 թ., էջ 29; Լեռ. Անցեալից, Թիֆլիս, 1925 թ., էջ 399:

⁷ Մուշել Ղազարեան, Ղարաբիլսայի մերուսամարտը, Թիֆլիս, 1920 թ., էջ 5-13, 14-16:

Պատմաբան Յ. Թուրշեանը վկայակոչում է գօրքին և ժողովրդին դեպի ճակատ մղելու մէջ մէծ դեր ունեցած Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանի⁸ մի գրութիւնը, որ նա նշում է. «Երբ երկու օր անց աւտոմոբիլով վերադարձա Ղարաքիլսա, ականատես եղա սուկալի փախուստի աննկարագրելի աւերին: 38 վերստ տարածութիւն ճանապարհը լցուած էր անբի սատկած կենդամիների լշերով, կոտրտուած սալերով, թափուած բեռներով, որոնց փախուստի երկիրը պիտի ապականուի»⁹:

Մի քանի մէշքերումներ անենք նաև Ղարաքիլսայի ճակատամարտի հրամանատարների զանազան ատեաններ լիած զեկուցագրերից, որոնք ոչ մի կասկած չեն թողնում, որ հայոց գօրքը, զլաւոր հրամանատարից սկսած, դիրքերը և գօրանոցները լքող զլաւապատա փախչող զինուրներով վերջացրած՝ չը պիտի կուռէր...

Ծակասի հրամանատար Թովման Նազարբէկեանն իր յուշերում գրում է. «20 մայիսի ժ.15-ի մօտերքը թուրքերը գրաւեցին Աւոհիրէկ գիտը: Ստացուած տեղեկութիւնների համաձայն թուրքերը մտադիր էին առաջ զնալ մինչեւ Թիֆլիս: Ալեքսանդրապոլի ջոկասի պետին հրաման արձակեցի թուրքերի կողմից Ղարաքիլսայի վրայ յարձակուելու դէպքում առաջին դիվիզիայի և երկրորդ լեռնային զումարտակի հետ եւս քաշուել Շահալի, իսկ Արդութիւնների հրամանատարութեամբ գործող միւս զօրամասերին՝ նահանջել Դիլիջան»¹⁰:

Վկայակոչներ նաև Հայոց Ազգային խորհրդի նախագահին ուղղած նրա երկու պերճախօս զեկուցագրերը.

«Հայկական կորպուսի հրամանատար, զօրավար Նազարբէկեանի 1918 թ.

մայիսի 18-ի հեռացիրը Հայոց Ազգային խորհրդի նախագահին՝

Ղարաքիլսայի ուղղութեամբ գործող բանակի զինուրների դասալքութեան

մասին (հասուած, թարգմանութիւն ուսւերէնից: Կրճատուծ տեղերը նշուած
են բազմակէտերով)

Չորրորդ զնի զինուրները լքել են դիրքերը և հեռացել...Զինուրների մէջ լուրեր են պտուտմ, թէ զներից զինուրները հեռանում են, թէ 4-րդ և 8-րդ զների երեսանցները, եւ ուրիշներ հեռացել են ամբողջական վաշտերով, որ 2-րդ հեծեղազունդը եւս ամբողջ կազմով հեռացել է Երևանի ուղղութեամբ...Տեղացիները զինուրներին բացէիրաց յալտարարում եւ յամողում են չը կուռել, քանի որ «Ճեր պատճառով են թուրքերը մեզ կոտորում... Գնացէք ճեր տները»: Պարնի եւ Եալլա զիների ողջ բնակչութիւնը և փախստականները

⁸ Մեսրոպ արքավիսկոպոս Տէր-Մովսիսեան (1865-1939), Նմուն է Գորիսի Ծիկարող գիտում, ասարտել է Ծուշու թեմական և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցները, 1891 թ.: Դորպատի համալսարանը, 1893 թ. ձեռնադրուել է արելա, ասպա մէկ ամիս անց ստացել վարդապետական աստիճան, 1908 թ. ձեռնադրուել է եպիսկոպոս, 1903 թ. նշանակուել է «Արարատ» ամսագրի խմբագիր, դարձել է բոլշևիկների ամբողեկութիւնների գործ, թաղուել Վաղարշապատի Ս. Գայիանէ նկելեցու բակում, այդ ժամանակ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին կից զաղթականութեամն օգնու արտակար յանձնաժողովի նախագահին էր:

⁹ Յ. Թուրշեան, Սարդարապատի ներուամարտը, Երևան, 1969 թ., էջ 175:

¹⁰ Բանքեր Հայաստանի արխիւնների, 1992 թ., թի 3, էջ 141:

սպիտակ դրօշներ պարզեցվ յայտարարում են. «Մենք սպասում ենք թուրքերին, մի կոուէք»: Հենց նոր լուր ստացա, որ Երևանի ուղղութիւնը պաշտպանող գումարտակի զիմառները, օգոստին կայի մատախուղից, խմբերով դասավառում են: Գումարտակի պետք գեկուցեց, որ դիրքերում մնացել են միայն սպաները և 30 հոգիանց զիմառների մի խումբ: Չը դասաված զիմառներն ասում են, որ մառախուղի պայմաններում հնարաւոր չէ հետեւնդ դասավախբերին և վաշտերում մնացել են 8-10-ական զիմառներ: Նրանք յայտարարում են, որ Փամբակի բնակիչները թուրքերի մօս պատուիրակութիւն են ուղարկել՝ յաճանուելու առաջարկով, իսկ իայ զիմառներին բացայատ յայտարարում են. «Հետացէք մեզանից, մենք թուրքական հպատակութիւն ենք ընդունում...»: Այսպիսի իրավիճակում սպաների աշխատանքը դրական արդիւնք չի տալիս...

18 մայիսի, 1918 թ., ժամը 10 անց 30 րոպէ

Կորպուսի հրամանատար՝ Նազարբէկեան

(Բնագիր ստորագրող է գօրավար Արեգեանը) ¹¹

* * *

**«Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբէկեանի
1918 թ. մայիսի 22-ի գեկուցագիրը Հայոց Ազգային խորհրդին**

...Թուրքերի դէմ կուելու պատրաստ մարդ բացարձակապէս չկայ: Դա' է հաստատում երեկուայ յապշտապ նահանջը, ինչը թուրքերին հնարաւորութիւն ստուեց առանց կոուի գրաւել Ղարաբիլսամ: Եթէ թուրքերը որոշեն յարձակուել Դիլիջանի վրայ, նրանք վաղը եւէր կը գրաւեն Դիլիջանը և նրանց ո՛չ ոք դիմադրութիւն ցոյց չի տա:

Դիլիջանում պահեստատորած պարէն և փամփուշտ բացարձակապէս չկայ, գօր-քերը մատնուած են սովի և եթէ նոյնիսկ ուզենան էլ, չեն կարող կոուել ...¹²

Նշուած իրողութիւններն... ինձ հարկադրում են ձեռնարկել հետեւեալ միջոցները.

Սուաշին՝ նախկին ալեքսանդրապոլեան գօրամասի բոլոր զիմառներին, որոնք փաս-տօրէն հնացաւ են գօրամասերից, բաց թողմել տմերը: Զիմառական մասերի հրամանա-տարների հակեցողութեամբ զիմառական մասերում պահեն միայն կադրային անձնակազ-մը (ինմա 'սպայական կազմը: Ու. Հ.):

Երկրորդ՝ այժմ եւէր յայտարարել, որ գօրքերի գօրամասերը պիտի բացառապէս յոյս-ները դնեն իրենց ունեցած միջոցների վրայ, քանի որ ուազմամթերքի և պարէնի առաքու-մերի աստացման յոյսեր չկան:

Խնդրում եմ սովոր իմ առաջարկները հաստատել:

¹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 200, ցուցակ 1, Ա-21, էջ 38-42; Հմմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբիլսա, 1918 թ. մայիսեան ներսամարտները, Երևան, 1998 թ., էջ 18-19:

¹² Իսկ այդ ինչպէս է որ երկու օր յետոյ կոուեցին: Ու.Հ.

Դրա հետ միասին զեկուցում եմ, որ անհրաժեշտ է անյապաղ հրաժարության ուազմական գործողութիւններից եւ հաշտութիւն կազեկ... Նաև խնդրում եմ ցուցում տալ՝ ի՞նչ անեմ, եթե բուրքերը շարունակեն յարձակումը Դիլիջանի վրայ, քանի որ կորպուսի սպայակոյուրը (շտաբ. Ռ. Հ.) այլևս նահանջելու տեղ չունի, որովհետև եթե բուրքերը Դիլիջանը գրաւեն եւ Շոյմիսկ եթէ սպայակոյուրն էլ որեւէ այլ տեղ փոխադրուի, ապա ես կը գրկուեմ Թիֆլիսի, նաև որոշ գօրամասերի հետ որեւէ ձեռի կապ ունենալու հնարատորութիւնից:

22 մայիսի, 1918 թ.

Կորպուսի հրամանատար՝ Նազարբէկեան¹³

Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին առաջին գործոյի հետինակ եւ դէպքերի մաս- նակակից Մանուկ Ղազարեանն էլ պնդում է. «Մեր զինուորական յայտնի ուժեր - Նա- զարբէկով, Բէկ Մամիկոնյան, Անդրանիկ եւ ոստիշներ - կողքնելով իրենց հաւասարակշուր- թիւնը՝ չունեին հմայք ու հետինակութիւն մասսայի աշքում»¹⁴:

Խնչակս տեսնում ենք, հայոց զօրքերի զլիաստը հրամանատարը ամբողջովին հաշո- ուել էր նահանջելու - դիմադրութիւն ցոյց չը տալու մտցի հետ եւ 1918 թ. մայիսի 22-ին Հա- յոց Ազգային խորհրդին զեկուցում էր, որ կոուելը անհնար է, որ անհրաժեշտ է անհանջել, քանի որ խումապ է եւ ոչ չէր ուզում կոուել: Ասել է թէ՝ հրամանատարութիւնը ոչ մի ազդեցութիւն չուներ զօրքի վրայ, այսինքն՝ բարձրագոն հրամանատարութիւն գոյութիւն չուներ, ոչ ոք ոչ մէկին չէր ենթարկում:

Այս իրողութիւններից մեկնելով անվերապահօրէն կարելի է յայտարարել, որ հայ- քուրքական ճակատներից ամենախարխուզ ու բարոյալքուածը Ղարաքիլիսայի ճա- կատն էր, որովհետև եթէ Սարդարապատում եւ Ապարանում պարտուղական տրամա- դրութիւնները կազմակերպուած նահանջից եւ թշնամու հէմ պայքարը լեռները փոխադրե- լու մտայնութիւնից այն կողմ չէին անցնում, բանակը կազմալուծուած չէր, իսկ բանակու- թիւնը որոշ տեղերում (օրինակ՝ Ապարանում), մինչեւ կանոնաւոր հայոց բանակի ժամա- նումը, կազմակերպում էր ինքնապաշտպանութիւն, ապա Ղարաքիլիսայում զօրքը եւ ժո- ղովուրդը գլուխը կորցրած փախչում էին: Ուստի, խնչակս վկայում են գրեթե բոլոր ակա- նաւենաները, իսկական հրաշք էր, որ այդ անյուապի պայմաններում զօրքն ու ժողովուրդը ճակատամարտ տուեցին ու տարան յաղթանակներ:

«Յուսալքումը տեղի տևեց ոգեւորութեան. Մայիսի 24-ին... Ղարաքիլիսայի մօտ... թուր- քերը շարդուած խուճապով քաշւեցին դէպի Համամլու... Մայիսի 25-ին եւ 26-ին... տեղի ունեցան յամառ եւ արինալի ճակատամարտեր... Ղարաքիլիսայի ճակատամարտում հայ զինուրը երեւան բերեց ուազմական բարձր կարողութիւն եւ ամսահման հայրենասիրու- թիւն»¹⁵:

Ուազմանակատի հրամանատար Թ. Նազարբէկեանը ես, որը երկու օր առաջ Հայոց Ազգային խորհրդին ուղած վերոյիշեալ զեկուցազրում ամսնար էր համարում դիմադրու- թիւնը, շեշտում է ուազմիկների հոգեվիխութիւնը՝ վկայելով, որ մայիսի 24-ին տեղի ունեցաւ «Զինուրների ու սպաների տրամադրությունների կտրուկ փոփոխութիւն, ոգու համընդ-

¹³ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 200, ցուցակ 1, Գ-21, թերթ 77 եւ Բակառակ էջը: Հմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, 1918 թ. մայիսին հերոսամարտերը, Երեւան, 1998 թ., էջ 40-41:

¹⁴Մանուկ Ղազարեան, Ղարաքիլիսայի հերոսամարտը. էջ 16-17:

¹⁵Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւնների կտրուկ փոփոխութիւն, Փարիզ, 1928, էջ 96-97:

հանուր բարձրացում. Ղարաքիլիսայի գօրախումբը անցաւ յարձակման... մայիսի 26-ին Մայմենի մօտ... թուրքերը փախչում էին»¹⁶:

«...Մայիսի 24-ին, մի անսպատի դէպք, աւելի շուտ մի զարմանալի հրաշք եկա ցուելու համատարած լուսիւմը, պատուեց մարտուան վարագոյրը և մարդկանց երակների մէջ խոսեց ապրելու եւ կոռուկու տեսնը: Ղարաքիլիսայից դէպի արեւելք Դիլիջանի ոյրապոյտ ճամապարհին երեւաց մի անորոշ զանգուած, որ քանի մօտենում, աւելի եւ աւելի մկանութիւն էր դառնում: Ծառ չանցած զիւղում երեւացին մի խոմք ճիշտրմեր, ոտքից զուկու զինուած: Ժողովրդի սարսափահար դէմքերին մնասուեց եւ զարմանքի եւ ուրախութեան նշան... Եկորումերը ծանօթ դէմքեր էին. Նժենեին տղերը:

- Գալիս է հայ զօրքը, գալիս են հայ կամաւորները: Կոի՞ պիտի տանք, փախչելն ամօթա, տղամարդկութիւն պիտ շանց տանք - արար աշխարհ պիտ զարմացնենք - ծկսող ու կորչողը - նամարդ է:

Լսողները չեն հաւատում իրենց ականչին. Ամենքին թում էր մի երազ, մի քաղցր ու կարճատել երազ...¹⁷

Ի՞նչ էր պատահել, ինչպէս եւ ի՞նչ պայմաններում է կատարում այդ, իրօք որ, հրաշքը:

Առաջինն այն էր, որ մայիսի 24-ին, երբ բարձրագոյն հրամանատարութեան պահանջով Դիլիջանում զումարուած զինուրական եւ աշխարհիկ դեկավարութիւնը քննարկման էր որեւ աճխուսափելի ճահանջը լաւագոյն կազմակերպելու հարցը, ստացում է Սարդարապատի մասուցներում մեր զօրքերի տարած մայիսի 22-ի յաղթանակի լորիք, որը կազմակի արագութեամբ տարածում է: Սա մեծ ոգեստրութիւն է առաջացնում յուսահատ զանգուածների մէջ. «Հրաշք էր պէտք մէշքը կոտրած բանակը ոտքի հանելու համար, գրում է Աւ. Արարունեանը, - Եւ հրաշքը կատարուեց: Մայիսի 24-ը էր. Երեւանից մի հեռագիր հասաւ հետեւեալ բովանդակութեամբ. - Բաշ Արարանու Դրոն իր փոքրաթիւ զնդով շարդի է թուրքերին և հետոապնդում է ցար ու ցրի փախչող թշնամում¹⁸.

Երկրորդ, Թիմճական եւ կարենուագոյն գործներ Գարեգին Նժենեն էր, որը կարողանում է ճակատ յարդարելու և դիմադրութիւն կազմակերպելու նախաձեռնութիւնը Վերցնել ձեռքը, բազմութիւններին ոգեշնչել ու տամել անքաղդատելի հերոսամարտի՝ ինարկէ մինչ այդ ունենալով անզուգական հերոս հերեւանաւոր կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանի, Դարպաս զիտի քահանա Տէր Կոմիտաս Սարգսեանի¹⁹, գաղթականութեանն օգնող ար-

¹⁶ Զօրավար Թ. Նազարեէկեանի լուշերը (ուսուերէ՛Յ), Բամբեր Հայաստանի արխիւմերի, 1992, թիւ 3, էջ 143-144:

¹⁷ Մ[ուշեր] Ղ[ազարեան], Ղարաքիլիսայի ներսամարտը, Թիֆլիս, 1920 թ., էջ 13:

¹⁸ Աւետիս Ամարունեան, Աւարայրի ոգեկոչումը, «Հայումիք» ամսագիր, 1932 թ., յունուար, թիւ 3 (111), էջ 81, 83-84:

¹⁹ Մնուել է 1861 թ. Ծիրակի գաւառի Պեմզաշէն գիտում, աւարտել է Հառիճի վաճիք դարոցը, ապա՝ երեք տարի ավլորել Ս. Էշմածին Գնորդեամ ճնշարամու: Երբ 1918 թ. մայիսի 21-23-ը թուրքերը մի շարք բնակավայրերի մետ միասին գրանցին նաև Սայիտակը, Տէր Կոմիտասը Դարքար գիտի նկենցիների զանգերի դողամշներվ գիտացիներին ուղիք հանեց ինքնապաշտպանութեան: Երեք օր շարումակ Կոմիտաս քահանայի շոկասոց, որին միացել էին նաև շրջակա գիտերի բնակիչներ, կուտայ էր թուրքերի դէմ հրաշքներ գործելով: Մահացել է 1928 թ. իր ծննդավայր Պեմզաշէնում, որտեղի քահանան էր:

տակարդ յանձնաժողովի նախագահ Մեսրոպ Եպիսկոպոս Տէր-Մովսիսեանի, Երևանից Ղարաքիլիսա ժամանած զօրավար Ղամազեանի և սակաւարի այլ իր նմանների ամվերապահ զօրակցութիւնը: Ընդ որում պէտք է անպայման շեշտել ու ընդգծել, որ Նժենականը (Տէր Կոմիտասը, կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանը, Մեսրոպ Եպիսկոպոսը և ուրիշներ) զօրքին կոչ էին անում կոռի՝ դեռևս մինչեւ հայոց զօրքի և ժողովրդի հոգեփոխութիւնը:

«Մայիսի 23-ին, օտարալեզու և հայալեզու բազմաթիւ աղբիրմերից քաղած տեղեկութիւնների վրայ հիմնուելով զրում է Փրանսահայ պատմաբան Ս. Աֆանասեանը.- Դարպաս զիդի քահանայ Տէր Կոմիտաս Սարգսեանը, փամփշտակալներով գօտեսորուած և մինչեւ ատամները զինուած, հնչեցնել է տալիս եկեղեցու զանգերը և հաւաքելով իր ծխականներին և Հաջիղարայի (այժմ Լեռնապատ: Ռ. Հ.) ու Ղշաղի (այժմ Վանաձորի Տարու անուանակոչուած թաղամասն է: Ռ. Հ.) զիդացիներին, դիմադրութիւն կազմակերպում: Նոյն օրը (պէտք է լինի՝ յաջորդ օրը: Ռ. Հ.) Ղարաքիլիսայում կազմակերպուած մի հաւաքում Մեսրոպ Եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը, զեներալ Ղամազեանը, զնդապետ Սամարցեան ու Նժենին, որոնք վերադարձել էին Դիլիջանից, որոշում նն դիմադրութիւն ցոյց տալ:

Տեղեկանալով Սարդարապատուս ձեռք բերուած յաղթանակի մասին, Նազարբեկեանը մայիսի 24-ին հրամայում է Բէջ-Մամիկոնեանին զնալ Ղարաքիլիսայի վրայ... Բէջ-Մամիկոննեանի զօրքերը բաժանուած էին երեք մասի: Յիսիսում, ուազմանակատի աջ թերը Վստահուած էր Անդրամինին, որն իր 2700 կամատրներով պէտք է պաշտպաներ Գետագետի լեռնամեցքը: Զախ թեսում, Հաջիղարայ զիդի մօտ գտնուում էին զնդապետ Սամարցեանի զօրաբաժնը և կապիտան Տէր-Մովսիսեանի 4-րդ մարտկոցը: Սրանք պէտք է ապահովէին Գետահա-Մալմէս լեռնազագարի պաշտպանութիւնը՝ Ղարաքիլիսայի հարաւում, խանգարելու համար թուրքերին թիկունքից զրոհելու հայերի մարտական շղթան: Կենտրոնում, զնդապետ Նիկոլայ Կորգանովի հեծեալները և Նժենի կամատրները պաշտպանում էին Դարպասից մինչեւ Ղշաղ ճգուտ հատուածը: Հրետամին դրուել էր զեներալ Ղամազեանի հրամանատարութեան տակ: Բոլորը միասին՝ մօտ 7 հազար մարդ, 20 զնդացիր և 12 թնդանոթ, մի ուժ, որ... պէտք է հանդէս զար 10 հազար թուրքերի դէմ:

Մայիսի 24-ին Ղարաքիլիսայից հետախուզութեան մեկնած հայկական յառաջապահ խումբը (Նժենին խումբն էր, տե՛ս յաջորդիւ: Ռ. Հ.) Դարպասի մօտ հանդիպում է թշնամուն: ²⁰

Իրադարձութիւնները զարգանում են հետեւեալ կերպ: Հայոց բանակի բարձր հրամանատարութիւնը, նկատի ունենալով համատարած խունապը և զօրքի բարոյալցուած վիճակը, ստիպուած տեղի է տալիս պարտողական համատարած տրամադրութիւններին և Դիլիջանում հրակիրած զինուորական ու քաղաքացիական հենակավարների վերոնշեալ խորհրդակցութիւնում յայտարարում, թէ հնարաւորութիւն չի տեսնում կոհից շարունակել և անհրաժեշտ է որոշում կայացնել նահանջել առանց կոռի:

Տե՛ս Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երևան, 1991 թ., էջ 60; Մինրան Մուրախեանի միստերը, «Ուրբայ» շաբաթաերթ, 1991 թ. մայիսի 10, թիւ 18, էջ 4:

²⁰ Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երևան, 1991 թ., էջ 63:

Ելոյթ ունեցող ների ու ներկաների բացարձակ մեծամասնութիւնը կողմ էր նահանջին: Եւ ամա այդ ճակատագրական պահին հրետանու մարտկոցի պես, երիտասարդ սպազ գործեն Տէր-Մովսիսեանը²¹ լայտարարում է, թէ ինը չի հնազանդում հրամանաւարութեամ այդ որոշումին, քանի որ նախանշը դատաճանութիւն է: Դրանից յևոյ պատմական ելոյթ է ունենաւ Նժեներ և իրադրութիւնը կտրուկ փխաւում է, ներկաները որոշում են կոռու մինչեւ վերջին փամփուշտը: Այնուինեւ Դիլիջանի Ս. Աստուածածին եկեղեցում (օծուել է 901 թ., բոլշևիկները քանդել են 1936 թ.), իր կազմակերպած հանրահաւաքում էր աւելի հզօր մի եղոյթով Նժեները ոգեսրում է ժողովրդին և հենց այդուելից մարտիկներին շարժում դէպի Վանաձոր-Ղարաբիլիսա:

Բերենք այդ իրողութիւնը հաստատող մի քանի վկայութիւններ ու փաստեր:

Զանգեզուրի ներսամարտի ուազմական մշանաւոր գործիներից Ռուբէն Նարինեանը (Լեռնահայաստանի բանակի գլխաւոր սպայակոյտի պետ) գրում է. «1918 թ. մայիս ամսուան Ղարաբիլսայի ներսական կոհիների նախօրեակին, երբ հայկական բանակի բարձր հրամանաւարութիւնը մատնուել էր ամորոշ վիճակի, իսկ զօրամաքերը խուճապի, եւ շատերն արդեն բռնել էին Դիլիջան-Թիֆլիս ճանապարհը, երեսում է Նժեներ եւ իր կրակու ճառերով լքուած զօրամասերը ոգեսրում... Վերականգնում ընկնուած հոգիները... Հրամանաւարութիւնը մկատերով զօրամասերի անսպասելի ոգեսրութիւնը և պայքարը շարունակելու պատրաստակամութիւնը, առաջարկում է զօրամասերի ղեկավարներին և սպայութեան ժողովներ ունենալ և շտուափոյ յայտնել իրենց վճիռը՝ կոռուել, թէ՝ նահանջեն: Բոլոր գմեներն ու առանձին զօրամասերը որոշում են հանում կոռու մինչեւ վերջին կարծի արիւնը... Մինչ այդ, Նժեները նեճելազօր հարիւեակի զլուսն անցած հետախուզութիւն էր կատարել և զնկուցել գլխաւոր հրամանաւարութեամ, որ թշնամին Դիլիջան չէ մտած, և տարածուած լուրերը ստոր անձանց գործն է եղած»²²:

8. Իրազեկը վկայում է. «Նժեները... իսկոյն կաղալով (պաշտպանական կոհիներին ուժից թեթև վիրաւորուել էր: Ու. Հ.) շտապում է եկեղեցու բակը և ժողովրդին ու զօրքին միտինքի հաւաքելով՝ կախարդում է ամենքին իր վարպետ խօսքով: Պատկերը միանգամից փխստում է և ամենքի ընկած ոգին բարձրանում: Այժմ ամենքը՝ և զօրքը, և ժողովրդը պատրաստ են կոռուելու անգամ իրենց կեանքները զրիաբերելով հայրենիքի փրկութեան հիմար: Խանդավառութիւնը ընդհանուր էր»²³:

Դւաքերին մասնակից մէկ ուրիշը՝ ՀՅ Դաշնակցութեամ գործի Երուանդ Խան Աւալեանը, Նժեների հարցը քննող դաշնակցութեան գերազոյն դատական ատեանում տուած իր ցուցմունքներում, որը լսել են դատավարութեանը մասնակցած՝ դէպքերին ժամանակակից մեր գորքերի մայիսի 25-ի ընդհանուր յադրանակի գործում:

²¹ Գ. Տէր-Մովսիսեան (Մոսէսով, Մովսիսեան) ախալքալակի էր, «Լեռնային» կոչութ 4-րդ հրետանային մարտկոցի հրամանաւարը, որը յուսահաս բազմութիւններին դէպի ճական մղող եաւակի սպամերից մէկն էր (տե՛ս յաջորդ էջերը): Ակսած 1914 թուականից մասմակցելով տարբեր կոհիների՝ արժմանցել է սպայական բոլոր պարզեներին, եթեր անգամ վիրաւորուել: 1918 թ. մայիսի 25-ին աղիծամարտ տալով յուրք զօրքերի դէմ, զոհուց նարբաս զիսի մուտքում գտնուղ թիւ 750 բարձրութեանը գրաւելիս, որը վճռական աշանակութիւն ունեցաւ մեր գորքերի մայիսի 25-ի ընդհանուր յադրանակի գործում:

²² Մկրտիչ Այվազեան, Ղարաբիլսայի ճակատամարտու բացարկի էր (յուշեր), «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 2001 թ. մայիսի 2:

²³ 8. Իրազեկ, Մօտիկ ամցեալից, պատմական դէպքեր և ապրումներ, 1917-1922, Պէրութ, 1956 թ., էջ 31-32:

կից եւ ականատես ուրիշներ, ասում է. «Այն ժամանակ, երբ ամրող զօրքը, ժողովուրդը, իմաստիլիքնեցիան, բոլորը բարյալքուած փախչում էին առաջին իսկ պատահած ճանապարհով, այն ժամանակ երբ հայ բանակի սպայութիւնը ժողով էր գումարում Դիլիջանում, ստիպում էր գեներալ Նազարբեկովին զնալ Ղարաքիլիսէ եւ սուրբ յանձնել թշնամուն, ահա այդ ժամանակ հրապարակ եկաւ Նժդեհն իր ամրող հասակով: Նժդեհը, երբ հրաման ստացաւ կուսակցութիւնից կատարել Արամ փաշայի պահանջն (երեք օր դիմանալ) անցաւ հաւաքրոջի յարմար տեղը եւ ասաց. «Սպաները զնում են անձնատուր լինելու: Թող զնան: Իսկ ես զնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարյալքէն մեռած չի համարում թող թետևի ինձ»: Եւ նա զնաց քիչ մարդկանցով: Կատարեց ամենամեծ գործն՝ իր անձնազորութեամբ տուեց պատմութեանը Ղարաքիլիսայի հերոսամարտն, իսկ մեզ՝ անկախ Հայաստան»²⁴:

«Նժդեհը այդ օրերում յայտնուեց Ղարաքիլիսի ճակատում, - զրում է ականատեսը՝ ճակատամարտի մասնակից, վաշտապես Վախտանգ Տէր-Յարութիւնեանը, - նախ որպէս խրախուսող առաքեալ: Նրա խօսքը՝ պողաստ հանցնելու եւ պատնեշ կանգնելու հիմնուացուցիչ գուշչութիւնն ուներ: Դասավիճութիւնը նահանջում էր Նժդեհի հայրենացունչ խօսքի առաջից: Ծուտով ամեն մարդ դէախ ճակատ զնալու եւ կենաց ու մահու վերջնական կոհի մղելու տրամադրութիւն վերատացաւ՝ շնորհի Նժդեհի թէ՛ համոզիչ խօսքին եւ թէ՛ կոհի վարելու նրա ժողովրդաճանաչ հմտութեան:

Նժդեհն էր որ մենց շիրակցին կատաղի կոուի: Նրա խօսքն ու անձնուեր գործն էր, որ մեր զինուրը կոուեց»²⁵:

Դեպքեին քաջատեղեակ ու ժամանակակից Ա. Ամուրեանը նշուած փաստը յիշատակում է, որպէս վաղոր արդէն ամրագրուած եւ համընդունելի իրողութիւն՝ գրելով. «...Որովհետեւ նոյն ճակատի վրայ (Ղարաքիլիսայի: Ռ. Հ.) Գ. Նժդեհի մի կրակու ճառի հետեաճրով հազարատը հայեր գէնք վերցրին եւ դէախ ճակատ խոյացան»²⁶:

Հերոս կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանի մարտկոցի ուազմիկ, Դիլիջանի եկեղեցու հանրահանաքի մասնակից, Սերգէյ Թորոսեանը զրում է. «Ծառերից ինձ յաջողուեց լսել միայն երկուսը: Խօսում էր Գարեգին Նժդեհը: Ծատերը ծանօթ են Նժդեհի պերճախօսութեան եւ հուստորական կարողութիւններին: Բայց այդ օրուան նրա ճառը խոր տպատրութիւն թողեց բոլորի վրայ: Նրան յաջողուեց շատերի սրտի ու հոգու մէջ նորից վառել հաւատը դէախ մեր ժողովրդի ապազան: Ընթիսանուր ցնցութեան մէջ նա կոչ արեց բոլորին անմիջապէս շարժուել դէախ Ղարաքիլիսէ, բռնել դիրքեր, ուր դեռ կանգնած էին նահանջած զօրամասերից ումանք եւ կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը...Ոգեւորութիւնը դառնում է աննկարագրելի: Վրայ հասաւ զօրավար Նազարբէզեանի հրամանը, ուղղուած զօրքին՝ «Ցառաշ դէախ ճակատ»: Եւ կատարուեց հրաշքը: Դեռ մէկ օր առաջ բարյալքուած ժողովուրդը եւ զօրքը, մէկ մարդու պէս, նետուեցին առաջ, դէախ կոհիւ...»²⁷:

²⁴ ՀՅ Ղաշնակցութեան Բոստոնի կերոնական դիամ, դատական գործ, էջ 401–403, տպագրուել է՝ Ա. Յարութիւնեան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թարիգի դատավարութիւնը, Երևան, 2001 թ., էջ 112; «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, թիւ 107, էջ 3:

²⁵ «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, թիւ 107, էջ 3:

²⁶ Ծանոթ Ալեքսանդր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրագնո, 1967 թ., Ա. Ամուրեանի առաջարանը, էջ 44:

²⁷ Սերգէյ Թորոսեան, Հայ-թրքական պատերազմի օրերին, «Հայրենիք» ամսագիր, 1951 թ., օգոստոս, թիւ 8

Դեպքերի մեկ այլ ականատես, զյուապես Արտավազդ Յարութիւնեանը գրում է. «Նըծնեանը շատ անգամ ողեցուն խօսք ուղղած էր բազմութեան, ի մասնաւոր՝ մարտական ուժերուն: Բայց Ղարաքիլիսէի ճակատամարտի հախորէին արտասանած ճառով՝ ինքն իրեն գերազանցեց: Սովածաւալ բազմութիւնը, որ յուսալքուած, ընկնուած, հոգեկան ծանր տագնապի էր մատնուած, մէկէն փոխուեցա հմայուած ու հիմնուացած Նժենի հրաշունչ խօսքերէն: Էլեկտրականացած ամրուս ուազմական բարձր տրամադրութիւն ցոյց տուա ու ակաս գոչել միաբերան. «Կեցցէ՛ Նժենիը», «Մա՛ի կամ Ազատութիւն»:

«Դէպի ճակա՞ն, այնուն է մեր փոխութիւնը», - կը հնչէր Նժենի հուժկու, վճռական նու ինքնավսուար ձայնը: Պէտք էր տեսնել, թէ Նժենի ճառէն ետք, ինչպէս պահ մը լքուած, ու այժմ զօտեամուրուած այդ բազմութեան մէջէն մարտական ուժերը համախմբուեցան զինուրականներու շուրջ, եւ՝ ամրոխային վիճակէն դուրս եկած, կարգապահութեամբ ենթարկուեցան հրահանգներու՝ կազմողվ վաշտեր և գումարտակներ (ընդզումն իմն է: Ու. Հ.): Այսպիսով Ղարաքիլիսէի ճակատը, որ բաց էր մնացել և թշնամին պիտի կարողանար լիկուիտացիայի ենթարկել Արարատի և Սարդարապատի ուազմաճակատները, ապահովեցաւ ու ցողոցեցաւ բաց աշքերով դէպի մահ զացոյ գօրամասերով: Եւ այդ բոլորը՝ շնորհի Նժենիմ... Դիլիջանի եկեղեցու բակում Նժենի խօսած ճառը. - յաճախակի ասել է այդ ճառը լսած թ. Զարիֆեանը. - Ղարաքիլիսէի պատմական ճակատամարտը հոգեբանօրէն կարելի դարձնող խօսք էր: Նա պատում էր և զարմանում մարդկային խօսքի հոգիները յեղաշրջող և ցեցող ողի վրայ»²⁸:

«...Նոյն է կատարում նաև Դիլիջանի եկեղեցու բակում, - գրում է 20-րդ դարի հայ իմաստափրական մտքի գագաթներից մէկը՝ դոկտոր Հայկ Ասատրեանը, - ուր ծերունի գօրակար նազարբէգեանը խեղող արցունքով մարտի հրամեր էր կարդում իր բանակին և Գարեգին Նժենին իր ցացող ճառով բորբոքում էր հայ գօրքի խանդը...»²⁹

Ցոյժ արծեքաւոր և դէպքերին ականատես, դաշնակցական լայտնի գործիչ Վահէ Անդրունի (Ծնունդ է 1884 թ., Շատախի գաւառի Կողը գիւղում, մահացել 1958 թ., Թեհրանում: Ու. Հ.): Վկայութիւնը: Նա գրում է. «Մեր գօրքը, կարծէք, յենակ կորսնցուցած էր և կը դդուարանար ապահով առանցք մը գտնել՝ ինքնավաշտպանութեան համար...»

Այս պայմաններուն մէջ յուսալքումն ընդհանրացաւ և խորացաւ, կարզը և կանոնը տեղի տուին բնազդային աննապատակ նահանջի: Անդրամիկը, որ կը պահէր աջ թեւը, օրերով ինքինը կոնրեց յարաբերութիւնն ընդհանուր հրամանաւորին մետ... Բազմաթիւ սպաներ և ամազին թուով գօրք բռնեցին Սանամինի գիծը դէպի Թիֆլիս և, վերջը վերջ, չչին բացառութիւններով կոտրուեցան: Զօրավար Արեշեանը, անսպատավանատու կերպով մեկնած լիմերով Թիֆլիս, գօրավար նազարբէգեան ամոր տեղ գօրամասի ճակատի պես նշանակեց զնդապես Բէկ-Մամիկոնեանը: Իր անցեալէն դատերով՝ հայու և Հայաստանի մետ կապ ու առնչութիւն չունեցող մէկը, բնաւորութեամբ՝ դիրազրդի, ենթականները իրարու մետ շաղկապելու ծիրքէն գրեթէ զորկ, մանաւանդ՝ շատերուն ծանօթ որպէս Մուրատի և Սեպուհի վաշտը Կարսում զինաթափելու ուղղակի պատճառ: Դժբախտ էր այս ընտրութիւնը՝ յատկապես այս դժբախտ օրերուն համար...

(307), էջ 72-73:

²⁸ Այօ, Նժենի, Պէյրութ, 1968 թ., էջ 67, 468:²⁹ Հայկ Ասատրեան, Հայաստան - Արիական նախադիրը Առաջար Ասիալում, տե՛ս նաև՝ «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29:

Հայկական զօրքը... լքեց հեռացաւ Ղարաքիլսէի ամնան դիրքերէն՝ առանց թշնամիի հետքը տեսած ըլլալու: Իրաց այս կացութեան առաջ զմղապետ Բէկ-Մամիկոնեան հրահանգեց զօրամասի բոլոր մասերուն, նկատի ունենալով ստեղծուած դրուժիւնը, հինգ օրուայ զէնք ու մթերք վերցնել՝ աւելի հեռունենալով մնելու պարտիզանական կամ խմբական պայքար: Այս հրահանգը, եթէ շատերուն ճիշտ ուզած եւ սպասածն էր, պակաս չէին նաև անոնք, որոնք վրովունեցան՝ տեսնելով հայ հրամանատարութեան աններեկի տկարութիւնը: Աւելի քան վրովունեցան... որովհետեւ շատ չանցած ամէն կողմէ ծայր տուալ բացալայտ դժգոհութիւն: Հարկադրուած զօրավար Նազարբէզեանի կարգադրութեամբ՝ զնդապետ Բէկ-Մամիկոնեան Դիլիջանում կը հրափրէ խորհրդակցութիւն, աւելի շուրջ տեսակ մը զինուրական խորհրդիրդ... Բազմամարդ եւ խառը ժողովի մը ներկայութեան զնդապետ Բէկ-Մամիկոնեան ճնշուած եւ յուսահատ տոնով մը պատկերացնելէ յստոյ ստեղծուած կացութիւնը՝ յանուն զօրավար Նազարբէզեանի յայտարարեց, թէ հնարաւորութիւն չտեսնելով կոհիք շարունակելու, իրաւունք կը տրուէր հեռանալ ցանկացողներուն շարունակել իրենց ճամբան, իսկ հեռանալ չկամնցողներով պէտք է մնային իրենց պատկան զօրամասերուն մէջ ու սպասէին նոր կարգադրութեան: Բոլոր թնդանօթներն ալ պէտք էր անմիջապէս փոխադրել Զիբովսի գիւղը ու թաղել ապագայ գործածութեան համար: Ճնշող, ուղղակի խեղողոյ պահի... Շատերը կ'սպասէին նման յայտարարութեան մը, շատեր ալ ուրիշ ելք չէին տեսներ: Բայց փառք եւ պատի Հայ արեան: 4-րդ հրետանիի (մարտկոցի) պէտ, երիտասարդ սպայ Գուրզէն Տէր-Մովսէսեանը՝ կրակ կրորած վեր ցատկելով իր տեղին, որուաց. «Ես չե՞մ թնազանդի այդ որոշման: Դա դաւաճանութիւն է: Ո՞չ ոք իրաւունք ունի այդպէս վարուելու Հայոց ճակատազի հետ: Ես իմ թնդանօթներով այս իսկ րոպէին կը մնանամ ճակատը՝ մեռնելու: Ով տղամարդ է եւ հայու արիմ ունի իր երակներում թո՞ն իմ ետեից զայ»: Մթնոլորտը մէկէն փոխունեցաւ: Կրտսեր սպայի մը համարձակ ժեստը սեւ սոտեր մը ձգեց զօրահրամանատարութեան հրահանգին վրայ:

Ընդհանուր ոգեւորութիւն մը ծայր տուալ: Նժեկն, հետեւելով Տէր-Մովսէսեանին, ոգեշունչ ու կրակու ճառ մը խոսեց՝ կրկնելով եւ աւելի պարզելով իր անխորդի սպարտական մտքերը: Բախտի զուգահիպութեամբը՝ ճիշտ այդ ժամանակ հասաւ զօրավար Սիլիկեանի հեռազիրը, որով հաղորդելով Սարդարապատի գոյապայքարը, կ'առաջարկէր Ղարաքիլսէի թեւէն հարուածել թշնամին եւ թոյլ չտալ, որ ան նոր-նոր ուժեր հասցնելու իրենց դէմ (Ընդզուռն իմ է: Ռ. Հ.): Տեղի տուալ նաև ընդհանուր հրամանատարութիւնը: Գնդապետ Բէկ-Մամիկոնեան, անտես առնելով քանի մը րոպէ առաջ կարդացուած իր հրահանգը, հրամալեց անմիջապէս կազմակերպուել եւ վերադանալ Ղարաքիլսէի թափուր մնացած դիրքերը: Տէր-Մովսէսեանը իր հրետանիով, Նժեկն իր հարիւրակով խօսքէն անցան կենդանի գործի, ու «հուունաներու» խլացուցիչ թնդիւնի տակ բազմահազար յուսաքեկ բազմութիւն մը, րոպէապէս սիրտ առած, դիմեց դէպի ճակատը: Զօրավար Կամազեան մահացու հարուածներու տակ զօրաւորն ու անգօրը քեց դէպի առաջաւոր դիրքերը: Դիլիջանէն մինչեւ Ղարաքիլսէ լեռն ու ձորը նոր շունչ, նոր կեանք ստացան»³⁰:

Կապիտան Գուրզէն Տէր-Մովսէսեանի հրետանային 4-րդ մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար, շտաբ-կապիտան Պետրոսեանցը, իրենց մարտկոցի ուազմական գործողութիւնների մասին զեկուցազրում վկայում է. «...Ցանկարծ լսունցին զանգերի դողանչ-

³⁰ Վաթէ: Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայութիւնը: Շատախ, Երևան, 2002 թ., էջ 362-365:

մեր, բոլորը վագեցին դեպի զանգերը. վազում էին սպաներ, զինուրներ, փախատականներ՝ չիմանալով ինչ է պատահել, բայց բոլորի աշքերում փայլում էր փրկութեան լոյսը. գունունցին ուժեղ ոգով մարդիկ՝ բոլորին կոչ անեղով զմերի կազմել և յարձակուել թշնամու Վրայ... ԻԱՅ համար, որ գրչի մարդ չեմ, ոդուար է մկարագրել Հայաստանի համար այդ պատմական օրը, որը գուց թէ մեր ժողովրդին տուեց ապրելու իրաւունք: Մի քանի ժամում ճեւաւորուեցին մի քանի զմերը³¹:

Խիստ կարենոր է այն հանգամանքը, որ, ինչպէս միաբերան նշում են բոլոր ականատեսներն անհստի, Նժդեհը ոչ թէ սոսկ իր ճառով է հոգեփոխութեալ - կոորդ տարել յուսահատու ու հոգեբանօրէն պարտուած բազմութիւններին, ալլեւ, որն ամենակարեւորն է, որպէս յառաջապահ՝ **առաջին** բախումը թշնամու հետ առաջնորդել ու վարել է ինքը (Բանակի զիսաւոր հրամանաւոր Թ. Նազարբէկեանը թշնամու դէմ հակայարձակումի առաջին հրամանը տուել է Նժդեհին, որն էլ իր զօրամատով Դիլիջանից առաջինն է թշնամու վրայ ճետուել կոորդի):

Մշշբերում եմ այս ամենը հաստատող վկայութիւններ, որոնց մեծ մասը, ինչպէս արդեն նշել եմ, Ղարաբիլսայի մասին գորուած գիտական աշխատութիւններում շրջանառութեան մէջ չի դրուած:

«Եւրջին պայքարի խիզախ քայլը պատկանում էր Դիլիջանին, ուր կենտրոնացել էին հայ զօրքի կազմայուծուած մասերը ու փախատականների հոծ բազմութիւնը: Նրանց մէջ ու ուզմական տրամադրութիւն ստեղծողն եղաւ ժողովրդական հերոս Նժդեհը (Այս ու յետագայ ընդգծուած է իմ են: Ռ. Հ.): Նրա եւ մի քանի ենսուոգիաստ գործիչների կրակու ճառերի վայրկենական ազդեցուեան տակ վճռուեց դիմատրել թշնամուն Փամբակի լեռներում, բաց կրծքով դրուս զալ նրա դէմ եւ մի անզամ էլ ցոյց տալ արար աշխարհին, որ հայը... գիտէ հերոսաբար կուել եւ փառաւոր մահով մեռնել... Վախկոս ու թուզամորք ամբոխը վերածնում է: Նրա միջից ջոկում են հազարաւոր կամատրեր, կազմում են ուզմիկ զմեր եւ շարժում առաջ... Աւանճարդը հանդիսանում է Նժդեհի հեծելագումդը, որ յետագայում, Հաջի-Ղարայի (այժմ մտնում է Կանաձորի մէջ: Ռ. Հ.) տակ երեսան է համում առասպեկտական յանձնութիւն: Հայ զօրքի անապասելի վերադրձը նոր ողի եւ նոր աիսն է ներշնչում Փամբակի լքած... մասսային: Առաջ է զալիս՝ առանձնապէս Ղարաբիլսայում՝ անսահման ոգեսրութիւն: Թշնամուն դիմատրելու վերջին փորձը փոխում է ժողովրդական պայքարի: Դա կոփի պատրաստութիւն չէր, դա անմահութեան տօն էր: Ամենքի դէմքի Վրայ փայլում էր ցնծութիւն բոլորն էլ իրանց զգում էին ազատ ու հպարտ: Անձանօթ մարդիկ իրար պատահելիս գոկախառնում, հոնքուր-հոնքուր լալիս էին... Պատահուց սկսած մինչև զառամեալ ծերունին զէնք են վերցնում-կոռուի շտապում. դեռահաս կոլսից մինչեւ պառաւ գեղջկութիւն գործի են ամցում-թիկունք ամրացնում... Նժդեհի խումբը Դարրազի ու Հաջի-Ղարայի արանքում գերմարդկային ճիգեր է գործադրում կանգնեցնելու թշնամու բազմապատկուած ուժի ներխուժումը. նրա մի խումբ քաշերն առասպեկտական հերոսների նման հրաշքներ են գործում»³²:

Իր յուշերում Ս. Թորոսեանը շեշտում է. «Դիլիջանի եկեղեցւոյ գաւթի մէջ տեղի ունեցած միտինզից յետոյ, ամէն ոք շտապում էր իր կարելին ամել՝ օգնելու համար ճակա-

³¹ «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, թիւ 107, էջ 3:

³² Մ[ոշենդ] Ղ[ազարեան], Ղարաբիլսայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920 թ., էջ 16-17:

տին... [դէպի ճակատ] առաջին շարժող ները եղան Նժեկին ձիաւոր գոմզը և մեր մարտկոցը» (Ակատի ունի կապիտան Տէր-Մովսիսեանի մարտկոցը: Ու. Հ.)³³: «Ժամերգութիւնը վերջացաւ... Յառաջապահ Բենելազօրը շարժուեց դէպի Ղարաքիլիսա տանող ճամբան. և Նժեկին Բենախուզական զօրասինը առաջինը խաղաց դէպի թշնամին՝ նրա զօրութիւնն ու վեր դիրը պարզելու համար:

...Հայ զօրքերի այս լեռակարծ լալտուելը նորէն սրտապնդեց դժբախտ աւանի բնակչւթեան, արիութիւն և ոգի Աերշնչեց յոսահատ ժողովրդին, որ ոտքի եղաւ մեր մարտիկ-ներին օգնելու, ինչով կարող էր: Նոյնը կատարուեց և Ղարաքիլիսէի հարեւան Պշլաղ զիւղում, որ Նժեկին զօրասինի մասերը դարան մտան, շրջակայքի անտառապատ բարձունքներին հակելու համար:

Ծուսով երեւացին թուրք յառաջապահները և անզիտակ դարանակալ մեր ոյժերի Աերկայութեան, ծողակն ընկան: Կոհիը բորբոքուեց բոլոր դարաններից: Թուրքերը ծանր կորուստներով փախստական Աետուեցին դէպի Ազնուր՝ առանց կարողանալ տանելու անգամ իրենց Վիրատրմերը: Յառաջապահ մասերի այս բախտումը և մերոնց յաղթանակը (Խմացիր՝ Նժեկին հրամանատարութեամբ: Ծան.- Ու. Հ.) ընդհանուր ոգեւորութիւն առաջ բերեց մեր զօրքերի շարքերում: Լաւ սկսուածք էր մեծ ընդհարում... Ծակատը կազմուած էր և մեր զլխաւոր ուժերը մետղենէտ հասնում էին, դիրքեր գրաւում (Բոլոր ընդզծուներն իմը: Ու. Հ.) ...Մեր առաջին յաջողութեան (իմա՝ Նժեկին զօրաշոկատի - Ու. Հ.) լուրը կայծակի արագութեամբ անցել էր Գուգարաց սար ու ձորով և ո՛վ հրազէն ուներ և բազկի ուժ, շտապում էր ճակատ... Մի օր առաջ թշնամուն աղ ու հացով ընդառաջող Ղարաքիլիսան այժմ ուորք էր ատամները սեղմած, թիկունքն իր օշակին և հրացանը ձեռքին աներկիւլ... Մեր մէկի դէմ տասն թուրք էր ճակատում...

Մայիսի 26-ին, կուի 3-րդ օրը, թուրքերի մի նոր յարձակում ծայր տուեց: Կէս օրին մօտ ամրող ճակատի վրայ, որ ձգում էր տասնեակ քիումնոր տարածութեան վրայ, արինանեան բախտումը երկու բանակների վերստին աւելի կատաղի, աւելի յամառ քան երեքը: Հաջի Ղարայ թայթար զիւղին նայող բարձունքների վրայ ամրացած թշնամին կրակ բացեց մեր ձախ թեփի դէմ, ուր գործում էր գնդապես Սամարցեանի զօրաքամինը, որին շուսով պիտի միամար Նժեկին զօրասինը: Մեր ձախ թեփ ուժգին թնդանօթային կրակով ծնծում էր թուրքերի դիրքերը, որից լետոյ՝ Սամարցեանի և Նժեկին միացեալ ուժերի գրուն սկսուեց... մեր ձախ թեփի յաղթութիւնը կատարեալ էր: Այս մեծ յաջողութեամբ կնքուեց երկուորդ օրուան ճակատամարտը: Անդրանիկից լուր չկար... Եւ 1918 թ. մայիսի 24-ին, կէսօրից լետոյ ժ. 3-ին սկսուած անեղ ճակատամարտը Ղարաքիլիսէի առջև դադարուն էր մայիսի 28-ին, կէսօրէ ետք ժ. 3-ից 20 րոպէ անց... Ղարաքիլիսի ճակատամարտում ո՛չ յաղթու և ո՛չ յաղթած կար. այդ երկու շարդուփշուր բանակներ նորէն դէմ-դէմի մանակին:

Հայ ցեղը այդ օրերին սրբազն Աւարայրը ոգեկոչեց և իր մեծ հայրերի ուազմական կորովով կեանքի և մարտի մարտի եղաւ... Եւ Հայոց աշխարհի սիրուն, երկու հազարի շափ մեր ընտիրները իրենց մատաղ կեանքը զոհինեցին: Եւ թշնամին, որ մի քանի անգամ աւելի կորուստներ ունեցաւ, երկար ժամանակ պիտի յիշէ այդ ճակատամարտը, ինչպէս պարսիկները Աւարայրը (451 թ.) և արաբները Վարդանակերտը (702 թ.): Արդարեւ, այդ երեք

³³ Սերգէ Թորոսեան, Ղարաքիլիսէի ճակատամարտը, «Հայրենիք» ամսագիր, 1951 թ., սեպտեմբեր, թիւ 9(308), էջ 55:

Բնարուսամարտերը մեր պատմութեամ ալեծոսի ծովից դուրս ցցուած գոամիտէ ժայռեր են, որոնց վրայ երեք անգամ հայ հայրենիքի թշնամիների կատաղութեամ ալիքները փշրուեցին:

Եւ եթէ Աւարայրը հզօրագոյն սատարիչն եղաւ Մամիկոնեան Մարզպանութեամ աշխարհում, և Վարդանակերտը Բագրատունեաց փառաւոր տոհմի ուժին հարթեց դէպի հայկական գամը, Ղարաքիլիսէ-Սարդարապատը մեր օրերում Հայատանի Հանրապետութեամ հիմքերը ձգեցին, Միացեալ եւ անկախ Հայատանի համար»³⁴.

Այժմ մշշբետնը նաև ճակատամարտին մասնակցած զինուրականների՝ մեր ձեռքի տակ եղած շատ տող վկայութիւնները ճակատամարտին նժդեհի վճռական դերակատարութեամ մասին:

Ղարաքիլիսայի դիցագնամարտի հերոս դեկավարներից մէկը՝ Բեծեղազօրային բրիգադի հրամանատար, զնոսապետ Նիկոլայ Ղորդանեանը (Կորգանով) զօրավար Նազարբէկեամին լուծ իր 1918 թ. յուղիսի 4-ի զեկուցագրում նշում է: «Մայիսի 24-ին Ղարաքիլիսայում էր գտնում միացեալ Բեծեղազօրային ջոկատը, որը բաղկացած էր առաջին Բեծեալ զնդից, Ղարսի զնդից եւ կամատրների (Խնացի՛ Գ. Նժդեհի կազմատրած: Ռ. Հ.) ջոկատներից: Թրերի քանակը՝ 2000 և 4 թնդանո՞ց շտարս-կապիտան Մուսէտովի (Գուրգէն Տէր-Մովսիսեանց: Ռ. Հ.) տնօրինութեամ տակ: Համաձայն Ղարաքիլիսայի ջոկատի պետի մայիսի 24-ի Բետազրի՝ իմ առջև խնդիր էր դրուած առաջ շարժուել Արջուտ, Սարպ-Կուրսալյա զծով, որտեղ արհամեցաւ էր նմեկ պահակային հսկիչ զօրամաս՝ ունենալով հսկիչների ուղղերվ: Մայիսի 25-ի առաւտեամ շտարի պետ, պորուչիկ Եղիշազարովի եւ պորուչիկ Նժդեհի հետ՝ իր 40 ձիաւորներով եւ դուրս եկա Բետախուզութեամ: Արջուտի կիսակայարամի մօտ Բետախտակով Ակատելի էին խնդիր, աջ ու ձախ կողմերից սարերով շարժող հակառակորդի ոչ մեծ խմբեր՝ 10-15-ական մարդկանցով: Ես ենթադրեցի, որ դրանք հակառակորդի Բետախուզութեամ են: Վերադառնալով Դարբաս՝ ջոկատի մօտ, ես մէկ Բեծեղավաշտ առաջ մղեցի դէպի Արջուտ, որի առաջ խնդիր դրեցի Արջուտ-Սարպ-Կուրսալի զծով իրականացնել Բետախուզութիւմ՝ ասլահովելու այդ գիտերի գրաւումը: Հեծեղավաշտը ուղարկեցու պահին ես Նժդեհից տեղեկացել էի, որ իմ աջ թեսում սարերում նա ձերբակալել է հակառակորդի մօտ 100 հայովներ... Այդ օրը ջոկատի կորուստները կազմեցին. զոթե՛ 4-րդ գումարտակի հրամանատարը, 1-ին հրաձային գումարտակի հրամանատարը, շտարս-կապիտան Մուսէտովը, 25 զինուրներ:

Վիրատորներ՝ 1 ապա, 40 զինուր»³⁵:

Կիեւում բնակուր զնոսապետ Կոմանդոնին Բագրատեամ, հիմնուելով Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից իր հօր եւ պրա ընկեր Բեծիամինի (ցաւօք ազգանունը չի պըշուած) լուծերի վրայ, 1998 թ. տպագրել է այդ իրադարձութիւնների մասին մի գիրք, որտեղ բաւական ընդարձակ Ակարագրում են (երեսի մեր ձեռքի տակ եղած Ակարագրութիւններից ամենաընդարձակը) Նժդեհի մարտական գործողութիւնները, որոնք յոյժ արժէքաւոր են յատկապես այն առումով, որ մեզ առաջմ չի յաջողուել որեւէ մէկ այլ աղբիւրում զտնել

³⁴ Աւետիս Աթարնեան, Աւարայրի ոգենոշումը, «Հայրենիք» ամսագիր, 1932 թ., յունուար, թիւ 3(111), էջ 91-92, 96, 100-101:

³⁵ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, գ. 1, գործ 79, էջ 20-21: Հմնտ. Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնալուական, Երևան, 1988 թ., էջ 201-202: Փաստաթութիւն կրօնական տարբերակը տպագրուել է Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, 1918 թ. մայիսեան Բերուսամարտերը, Երևան, 1998 թ., էջ 73-ում:

Վանաձորում Նժենի վարած ուսպանական գործողութիւնների ննարապրութիւնը. «Թուրք բանակը, չը համեղպելով զօրավար նազարբէկովի զիմատրութեամբ գործող հայոց բանակի որեւէ դիմադրութեամը, լընթացս զրաւեց ուսպանական կարեւոր պատմէց հանդիսացող Զաջուոհ լունացը, իսկ մայիսի 20-ին՝ Համամլոն և մօտեցաւ Ղարաքիլիսային: Եւ միայն շնորհի վերջապահ զօրամասերի նախաձեռնող գործողութիւնների և զընդադատութիւնների Գարեգին Տէր-Յարութիւննեամ-Նժենի (յուշագիրը պորուչիկ նժենին գնդապետ է կարծել՝ եռեւի Ակատի ունենալով Նժենի ինքնուրոյն, համարձակ ու նախաձեռնող գործողութիւններն այդ կոհեւներին եւ նրա մեծ նեղինակովութիւնը: Ո. Հ.) եւ Ղորդաննեանի ընդիւնուր ղեկավարութեամբ գործող Լոռու և Գուգարքի շրջանների աշխարհազօրայինների խիզախ հակալարձակումների, հնարաւոր եղաւ... Ղարաքիլիսայի մատուցներում կազմեցմել՝ թուրքական 11-րդ դիմիզիայի զօրամասերի առաջինադաշնութ: Ցաօք, տուեալներ կան, որ հայկական կորպուսի հրամանատար, փորձառու զօրավար և անցեալուս քաջ զինուրական նազարբէկեանը (Այդ նահանջի համար նազարբէկեանը լուեցիներից ստացաւ «Ազադ բեզու» (Բայերէմ՝ ետ վազքով) մականունը: Ման. Կ. Բազրաւեանի), Ալեքսանդրապոլի անաջող ճակատամարտից յետոյ այն աստիճանի էր կորցրել իրեն ու հաւանաբար բարոյապէս ընկնուել, որ ուսպանավարական տեսակէտից նպաստաւր Զաջուոհ լեռնանցքում պաշտպանութիւն չը կազմակերպեց և կրաւորական նահանջներով ետ քաջուեց Դիմիզան: Եւ միայն Սարդարապատում եւ Բաշ-Ապարանում հայոց զօրքերի յաջող գործողութիւնների եւ զնայաւել Գարեգին Տէր-Յարութիւննեանի հրամանատարութեամբ Բաղվաղի (այժմ՝ Բազում: Ո. Հ.), Դարբասի, Հաշիդարայի սահմաններում գործող վերջապահ զօրամասերի ու աշխարհազօրայինների վճռական յարձակումների մասին հաշորդագրութիւններ ստանալուց յետոյ գեներալ-լեյտենանտ նազարբէկեանը իր զօրքերի հիմնական խմբատրումը որոշեց վերադարձնել Ղարաքիլիսա...»:

Ցուշագիրը անընհատ գործածելով «Վերջապահ զօրամասեր» արտայապտութիւնը և նշելով, որ մայիսի 20-ից 23-ը թուրքերի հեմ տեղի են ունեցել կոհեւներ, շահնեկանօրէն լրացնում է համատարած խուճապի և հայ զօրքերի նահանջի պայմաններում Կոմիտաս քահանայի, Գ. Նժենի և ուրիշների կազմակերպած ու ղեկավարած դիմադրութեան մասին Սերծ Աֆանասեանի տուեալները: Սա նշանակում է, որ Նժենի, համատարած խուճապին և հրամանատարութեան պարտուղական դիրքորոշումն հակառակ, թուրք զօրքերի հեմ կազմակերպելու վարել է դիմադրական կոհեւներ՝ մինչեւ իր նշանաւոր ճաղոց յետոյ զօրքերի ոգու բարձրացումն ու հակալարձակման անցնելը: Ծարունակենք մէջբերումները Բենիամինի յուշերից, որը, ինչպէս նշեցի վերը, մեր ձեռքի տակ եղած առաջմ միակ վաւերագիրն է, որտեղ առաւել ընդարձակ ու մանրամասնօրէն նկարագրում է Նժենը թէ՛ որպէս անձնական օրինակով զինուրեներին քաջակերող անվախ ու քաջ կուտի թրամարտիկ հրամանատար եւ թէ՛ իրեւ սառնասիրու ստրատեզ ու ուսպանակար. «Հայոց կանոնաւոր բանակը Դիմիզանից վերադարձալուն պէս անմիշապէս եկաւ մեզ օգնութեան..., սկսեց յենակէտերով՝ ուժեղացնել ու ամրացնել պաշտպանութիւննը... Զայիսից՝ Պշաւար զիսի շրջակայի Սուլէման սարից այն կողմ գտնուող Փաշինզիր քոչավարի շրջանում, աչից՝ Կամակատար բարձունքի եռեւի ալզիներում ու ձորերում... 1918 թ. մայիսի 24-ին զնայաւել Տէր-Յարութիւննեանի հեծեալ ջոկատը, որը գտնուու էր Կամակատար մատուի բարձունքի եռեւի թաքստոցում, ալզիների ու ձորերի միջով մօտենալով թուրքական պաշտպանական դիրքերի աջ թենին, լընթացս մարտաշարք կազմեց՝ յարձակուելու

Զպատակով: Թուրքերը մօտադրապէս հայկական զօրախմբի քանակութեամբ մի հեծելախումբ (քաղցրում՝ Եվկադրոն: Ու. Հ.) մղեցին առաջ: Հեծելազօրային թրամարտոց, դիմարտ սովորական ամամարտերն ու ձեռնամարտոց տեսեց մի քանի ժամ: Արկերի պայթիմից, ձիատրաերի ու հետեւակի կոյսկրտոցից մարտադաշտում փոշու սին էր բարձրացել: Թուրմ էր, թէ կոսոյ կոյնմերը հոգմել են և հակառակորդը համաձայնելով է ուզմական առաջին ամյացողութեան հետ: Բայց ահա թուրքերը Արշուտի կոյնից, մերոնց աջ թեւը շրջանցելով, Գեղարդարայի (այժմ՝ Վանաձորի արուարձան: Ու. Հ.) միջով Քզովդալ մղեցին մի քանի թարմ հեծելախմբեր: Ստեղծուեց թեւերից շրջապատուելով վտանգ: Գնդապետ Տէր-Յարտիկիւմնեանը կամ, ինչպէս նրան այդ ժամանակ էին յաճախ անուամում, խմբակն Նժենը հեծելախմբով ու Ղարաքիլիսեցի ձիատր աշխարհազօրայիններով շարժուեց առաջ՝ թշնամու դէմը կորելու համար: Թուրքերը մերոնց մկատելով, «ալլահ, ալլահ» գոչիւներով մետուեցին գրոհի: Գնդապետը (Գարեգին Նժենիք: Ու. Հ.), հետին փնչացնող ձիում թերեւակի զապելով, ձեռքը բարձրացրեց վեր: Մեր ձիատրները արշաւը դանդաղուին, իսկ հեծելաջոկերի հրամանաւարները սուրացին իր մօտ: Թրով, ցուցափալուի մնան ցոյց տալով տեղանքը և հրամաձելով ում ո՞րտեղից գրոթե, նա մի անզամ էլ շոտ եկա, մի քանի րոպէ սպասեց մեր ես ընկած աշխարհազօրայինների և «Ղշլաղի հայկական կազակների» (այդ տարիներին Լոռի-Գուգարքի գիլերում Դոնի և Կուբանի կազակների օրինակով, կազակական շարժումներ էին առաջ եկել) մօտենալուն: Երիտասարդ խմբակն ի (Գարեգին Նժենիք: Ու. Հ.) մտադրական դէմքը փոխուեց, դարձաւ մտայոց ու խիստ: Գրտինքը քունքերից հոսում էր ցած՝ լուանալով ու լողովելով դէմքի փոշին: Աչքերը հուրիբում էին զինավառ կրակով: Մեր հրետանին եւ մի քանի գնդացիրներ կրակ քացեցին թուրք հեծելախմբի վրա, բայց չը նայած կորուատներին, նրանք շեշտակի մօտենում էին: Զապելով ուղերդը տեղում անհամբերութեամբ տեղից-տեղ շարժող նժոյզին, որը կարծէն կամսազգում էր մահացու զօտենարտը, զնդապետը խօսեց. «Խմ մարտական եղբայրներ, մենք զնում ենք կոուկու մեր բազմաչաշար, քրիստոսարք մարտիրոսացած հայ ժողովրդի համար: Եմիշերի վիժուածքներին թոյլ չենք տա ծաղրուծանակել նրան:

Թիշեցէ՛ք սրբազն Էջմիածինը: Սուրբ Կամակատարին ուղած մեր աղօթքները մեզ օգնական: Յանում մեր հաւատի, Ասսուա՛ծ մեզ հետ»:

Զօրաբարամանաւարը մէկ հարիկենակով սուրաց թուրքական հեծելազօրին ընդառաջ, իսկ երկու այլ հեծելախմբեր ուղարկեց աջ եւ ձախ կողմերից թուրքերին առնելու կիսաշրջամի մէջ: Ձիատր զանգուածները պատ կազմած դուրս եկան իրար դէմ, մահաբեր գրկահատմանով միացան զիրար: Ակսուեց արիմանի դաժան սուրամարտոց, որը տեսեց մօտ մէկ ժամ: Դժուար էր հասկանալ ինչպէս կաւարտուի այդ կոտորածը: Ես ձգուում էի աշքից բաց չը թողնել խմբապետին, որովհետեւ, որպէս տեղացի, Աշամակուել էի ուղեկցորդ: Նա գտնուում էր մեր զօրքերի մարտաշարքի կենտրոնում և մարտը վարում էր վըստան ու համարձակ, իսկ ամիրածեշտութեան դէպքում արամարտում էր որպէս զերազանց դրագուն: Թուրքական հեծելազօրը ճնշմանը չը դիմացաւ, ակսու նահանջել նախ թեւերից, ապա՝ կենտրոնից եւ վախենալով շրջապատումից՝ մէկական մահապարտների հեծելավաշտ թողնելով որ պատսպարեն միւսներին, ակսու մարտադաշտից զիրաց ազատել: Ղշլաղ զիրա արեւատեան կոյնի այգիների շրջակալիքից մի քանի դաշտային հրանոթներ սկսեցին կրակել նահանջող թուրք հեծելազօրի վրայ՝ ցրելով նրանց և նահանջը վերածելով փախտատի: Մեր զօրքերը վրայ տոին ու մեղեցին նահանջող թուրքերին,

սկսեցին խիզախսօրէն ու կատաղի հալածել նրանց: Թուրքերը փորձում էին դուրս պրծնել, բայց դա նրանց համարեւայ չեղ յաջողություն: Երբեմն հայ և թուրք հեծեալները, ինչպէս ձիամրցման դուրս եկածներ, սուրում էին կողք-կողքի:

Եւ միայն այն ժամանակ, երբ մերոնք նրանց նահանջի ճամփան փակեցին, ակսունց յետընթաց կրակոցներն ու թրամարտուն: Այսպէս մեր զօրքերը նահանջող թուրքերին հետապնդեցին մինչեւ Արշուտի, Ղուրավի (Սպիտակից 6 կմ արևելք, Փամբակի ափին, Վանաձոր գնացող խճուղու և երկարքի աջ կողմուն: Ռ. Հ.) մատոյցները: Տասնեակ կիլոմետրեր ձգու լեռնալանջերը և Փամբակի գետեզերից հարող դաշտերը ծածկուած էին մարդկանց և անաստեների դիակներով: Թուրքական 11-րդ դիմիզիայի աջ թերի առաջապահ զօրամասերը եւս շախչախունցին ու ես շարտունցին...

Երբ մեր զօրքերը աջ թերից զմηապես Տէր-Յարութիւնեամի, ձախ թերից՝ զմηապես Ղորդանեամի հրամանատարութեամբ թուրքերին հալածելով հասան Արշուտ-Կուրսապի մատոյցները, թուրքերը շրջակայ բարձունքներից գրուրող հայոց զօրքերին առան թեաւհար մահաբեր կրակի տակ: Մեր զօրքերը, յատկապէս հեծելազօրը, կորուատներ կրեցին: Խմբապետը (Նժենիը: Ռ. Հ.) հրամանգեց հեծելազօրը հետացնել մօտակայ բարձունքների պատսպարանները, իսկ հետեւակին հրամանցեց հրամօթային կրակի պաշտպանութեան տակ խրամատարունկ նուանուած դիրքերում:

1918 թ. մայիսի 26-ի յաղթական օրը թերթում էր դէպի արևամուտ... Թուրքերը, այս ճակատում կրելով առաջին լուրջ պարտութիւնը, շշմեր, բարոյապէս ընկճուել էին: Ծակատամարտի առաջին օրուամից յետոյ ճակատի Ղարաքիլիսայի ուղղութեան շտաբը տեղատրուեց Դարրաս գիտում: Տէր-Յարութիւնեամը (Նժենիը) իր օպերատի խմբով գիշերեց Ծառար Սարոյեամի, իսկ Ղորդանեամը՝ Մովսէս Աւագեամի տանը...

Եթէ Անդրանիկի զօրքերը... միանային այդ հատուածի մեր զօրքերին, ապա անտարակոյս է, որ մենք միացեալ ուժերով կարող էինք զլյուվին շախչախել թուրքական՝ այդ ուղղութեամբ յարձակող զօրքը նիշտ այնպէս, ինչպէս Սարդարապատում... Բայց թէ Անդրանիկի այդ քայլի պատճառն ինչ էր, մնում է հանելուկ ...

Եղափու գիտի (Այժմ՝ Գուգարք գիտը: Ռ. Հ.) բարձունքներով, որ գտնում էր Ս. Սարգիս մատուող, ճամփանցում էր հայոց զօրքը: Գետի ափից Նժենիը իր բոցակարմիր ձին նաւած երկու թիկնապահների ուղեկցութեամբ լուր հետևում էր իր զօրքի մնացորդների շարժումներին: Երբ զօրախումբն արդէն գետի աջ ափին էր, ճամփանց զիսարկը, խոնարհուեց լեռներին, երեք անգամ խաչակներեց եւ դանդաղօրէն, կարծէս չուզենալով, ձին քշեց Փամբակի ծանծաղուտը: Դա վերջին անգամն էր, որ ես տեսնում էի խմբապետին՝ Գնդապետ Տէր-Յարութիւնեամին: Լինելով նրա քաղաքական յամոզումների թշմամին (յուշագիրը բոլշեվիկ էր: Ռ. Հ.)՝ ես ինչ որ անհասկանայի ներքին զգացողութեամբ, հնարաւոր է՝ նմթազիտակցարար, նրա ճկատմամբ յարգանք էի տածում, որպէս խիստ ողբերգական ճակատագրի տէր մի մարդու և որպէս իր հայրենիքի դաժան ճակատագրի համար անկենծօրէն մտահոգ օրինաւոր հայ քրիստոնեայի»³⁶.

Ականատեսների վկայութիւնները եզրափակում եմ Նժենի վկայութիւններով, որ նա ամփոփել է իր Յօդուածում, ուր նշուած է Դիլիջանի Ս. Աստուածածին եկեղեցու բակու հաւաքուելու հանգամանքները, իր արտասանած ճափ շատ ժատ նախադասութիւննե-

րով Ակադամիային և Առաջին ժամանակ ժամանակակից համապետ Ղորդանեանի միջոցով Գարեգին Նժենին ուղղուած Թովման Նազարբեկանի հրամանի պատճենը: Այդ վաւերապից պարզում է, որ Նժենին ճակատ մեկնելուց առաջ, ըստ իր ստորագրեան, իր զինուրացին համացում է եկեղեցու բակը՝ այնտեղից շարժուելու համար: Սակայն, քանի որ չուկատը առաջինը պիտի զնար թշնամու վրա, այդ պատճառով է գօրազուկատը եկեղեցուց դէպի ճակատ տանելու հապատակով Նժենին կազմակերպած արարողութիւնը դառնում է ժողովրդական մաղթանք, համաժողովրդական ինքնարուխ համբահաւաք:

Մէջըենքն վկասութիւնը.

«Հայկական կորպուսի հրամանատարը հրամայում է ձեզ՝ հէնց այսօր Զեր գօրամատված վերադառնալ Զարաքիլիսէ՝ շիման մէջ մտնել թշնամու ուժերի մետ եւ սպաել օգնութեան:

Հեծեալ գնդի հրամանատար՝ գնդապետ Կորգանով:

Մայիս 24, Դիլիջան:

Ստանալով այդ հրամանագիրը՝ կարգադրեցի գօրամասին կերպնամալ Դիլիջանի եկեղեցու բակը: Վայրիկանների ընթացքում տարածուեց Ղարաքիլիսէ վերադառնալու լորու: Ժամը 3-ի մօտերը եկեղեցու շուրջ խոնուեց ժողովութիւնը: Եկեղեցին ճամբար դնելու մնաց: Սայայակոյսի համբարզը կարդաց Երեւանից ստացուած վերջին տեղեկութիւնները՝ Սարդարապատու մեր գօրքերի տարած յաջողութեան մասին: Քիչ ամցած յայտնուեց զօր. Նազարբեկեանը եւ խոր լուգումով հաղորդեց Արամի պահանջը՝ «Երեք օր ժամանակ տալ Երեւանին, որ կարողանա հաշտութիւն կնքել թուրք հրամանատարութեան մետս»: Ասա մի քանի խօսքով օրինեց մեր չուն: Գնալով լուգումը կը խորանար: Եկեղեցում վաղուց եր մկտութ ժամերգութիւնը եւ զամկերի դողանշը, միացած քահանաների երգեցութեան, տիրորէն կ'արձագանքէր մեռուները: Պէտք էր երկու խօսք ասել մեկնելու պատրաստ գօրամասին եւ - առաւելապէս ժողովուրդին: Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ հայլացքը հանդիպեց ծերունի գօրավարի (Թ. Նազարբեկեանի: Ռ. Հ.) հայեացքին - արցունք կար նոր աչքերի մէջ: Հային էին, լայիս բոլորը: Իսձ էլ խնդիր սկսեց արցունքը... եւ հոգեքանական այդ մթնոլորտի մէջ, հազարի չափ զինուրներ ու կամաւորներ բռնեցին դէպի Ղարաքիլիսա երկարող ճամբար: Մայիսի 24-ը էր...»³⁷:

Այստեղ պէտք է շնչտել ևս մի խստ կարեւոր հանգամանք. Նժենին գօրազուկատին ճանապարհ դնելու արարողութեանն ու ժողովրդական այդ հանպատրաստից հասարացուին, որը հրասիրել էր Նժենին, մասնակցում եւ եղոյթ է ունենում ուազմանակատի զերագլու վլխաւոր հրամանատարը: Սա ծանակում է առանձնապատվով վերաբերմունք ուազմարշաւը սկսող գօրազուկատին, պահնըն՝ ուազմական վերին աստիճանի պատսախանատու և ճակատապարական գործողութիւնների սկիզբ, որից կախուած էր ամբողջ ճակատամարտի բախտը:

Իրօք՝ հրադրութիւնն այնպիսին էր, որ ոչ միայն սուեալ կոռու եղը, այլև ժողովրդի ինքնապտահութեան եւ իր ուժերի հանդէպ վերականգնուած հասատի պահանումը, այսինքն՝ ամրող ճակատամարտի եղը կախուած էր թուրքերի մետ առաջին բախտում:

Երբ ասում ենք, թէ Նժենին է Ղարաքիլիսայի ճակատամարտի կազմակերպիչն ու

³⁷ «Ազատ խօսք» օրաթերթ, Սոֆիա, 1935 թ. մայիսի 31, էջ 2; «Ռազմիկ» թերթ, 1939 թ., թի 121; Արտապուած է՝ Գ. Նժենին. Երկեր, թու. 2, Երեւան, 2002 թ., էջ 272:

վարողը, Ակատի պիտի ունենամք նաև հոգեբանական այս իրավիճակը:

Եթէ Բայերն այդ առաջին գոտենարտող շաբէին, Բամընթանուր ոգեսորութիւնն ու մարտական ոգին աւելի՝ կը բարձրանար: Խոկ պարտուելու դէպքով՝ բարոյալքումն ու զլյապատառ փախուստը կը դառնար անկասելի ու անկառավարելի:

Ահա այս առանցքային ու շրջադարձիկ հոգեբանական պահի ամբողջ պատասխանաւութիւնը ճակատագրի թերումով ընկած Գարեգին Նժդեհի վրայ, քանի որ Էրգրումը, Սարիհամիշը, Կարսը եւ Գիմրին իրար ետևից գրաւելով Վանաձոր հասած եւ որեւէ լուրջ դիմադրութեան չը Բանդիպած թուրքերի դէմ հայոց գօրքի առաջին բախումը պիտի դեկավարէր իմքը:

Այս վերին աստիճանի պատասխանաւոտ եւ վճռական կուում տանելով փայլուն յաղթանակ՝ Գ. Նժդեհը ոչ միայն իր ճառով կազմակերպեց դիմադրութիւնը, այլև իր անբարդատելի քաջութեամբ: Կասեցնելով թշնամու յաղթարշալը, նա բազմապատկեց յաղթանակի Բանդէա գինութրների եւ ծողովորի հաւատու նաև մարտի՞ դաշտում:

Մեկնելով Վկայաքերուած աղբիւներից՝ Կարող ենք անել ինտենսավ եզրակացութիւնը.

Առաջին մայիսի 24-ից 26-ը Ղարաքիլիսայում թուրքերի դէմ հայ գօրքի յաղթանակը վճռական էր, քանի որ այդ նոյն ժամանակ Սարդարապատում Բայերը ամրաժեշտ չափով չէին կարողացել զարգացնել յաջողութիւնը, իսկ թուրքերին յաջողուել էր մայիսի 22-ի պարտութիւնից յետոյ ուշից զալ եւ վերադասաւորելով ուժերը, Վերականգնել մարտունակութիւնը: Հետեւարար անժխտելի է այն իրողութիւնը, որ թէ Կարսից ու Ալեքսանդրապոլից յաղթանակներով դէպի Երևան արշատող թուրքերը 1918 թ. մայիսի 24-27-ին Ղարաքիլիսայում դիմադրութեան չը Բանդիպէին, ապա Սարդարապատի, նաև Ապարանի մայիսի 25-27-ի վերջնական յաղթանակները չէին լինի, քանի որ Դիլիջանից, Ապարանից ու Սարդարապատից թուրքերի անկասելի մուտքը Ս. Էջմիածնի ու Երևան կդառնար անխուսափելի... Ուստի, իրօք որ. «Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսէ ճակատամարտի ոչ թէ օրուայ Խ. Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենա: Ղարաքիլիսէ ետոքեայ հերոսականը փրկեց զլյուվին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմն դրեց Հայկական պետութեան»:

Երկրորդ՝ Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրէին գօրքի մէջ բացակայող կարգապահութիւնը, հրամանատար-զինուոր, ենթակայ-ստորադաս բնականոն յարաքրութիւնները, նաև ճակատելու ոգին ու կարողութիւնը Գարեգին Նժդեհը Վերականգնեց, ոչ թէ ճակատի հրամանատարութիւնը: Չինէր Նժդեհը, գօրքն ու աշխարհազօրը թշնամու դէմ չէին կոռուելու, ինչպէս չը կորսեցին Էրգրումում, Կարսում եւ Ալեքսանդրապոլում...

Հետեւարար՝ մենք պէտք է հաւատանք ժամանակի այն պէտական ու ուազմական խոշոր զործիչներին ու յատկապէս հէպքերի մասնակիցներին, որոնց մէջ նաև Նժդեհին, որոնք միաբերան ու անվերապահ պնդում են, որ ճակատից խուճապահար փախչող ժողովրդին ու անձնատուր լինելու տրամադրուած գինուրականներին ոգեւորել, հոգեփոխել, կազմակերպել, այն է՝ ճակատամարտ տալու նախաձեռնութիւնը իր վրայ Վերցնելով՝ յուսալքուած հրամանատարութեանը չենթարկուող հայոց գօրքին հնդիճակազուրկ հրամանատարութեանը վերանեթարկելով՝ յաղթական կոռուի է տարել Գարեգին Նժդեհը: